

Բ. Դօմանոցի՝ շարժում։ Այս շարժումը մարդուս աղիքները կը ցնցէ ու կը հաստատէ, և մկանունքը կը զօրացընէ։ բայց ամեննեին լաւ բան չէ անմիջապէս կերակրէ ելած ճօճանոցով օրուիլը։ վասն զի անմարսողութիւն ու ինչուան փախել կը պատճառէ։ Այս տեսակ կը թութենէն միշտ պէտք է զգուշանան անոնք որոնց որ և իցէ ժամանակ ըլլայ՝ ճօճանոցը գլխու պտոյտ և սիրտխառնուք կը պատճառէ։

Ա' ականը՝ և ասոր նման խաղերը իբրև բժշկական շարժմունք ալ առնելով՝ այնչափ օգտակար բաներ չեն։ վասն զի այնպիսի կարգէ գուրս արագ շարժմունքները շատ անգամ ինչուան մարդուն ըղեղին կրնան վնաս բերել։ դարձեալ շատ անգամ անմարսողութիւն, սիրտխառնուք և փախել ալ կը պատճառէն։

Երան շարժմանց կը թութեան տակ կը կը սեպուին նաև բարձր ձայնով կարգալը, երգելը ու պոռալը, և այլն։ որոնք մեր շնչարանին վրայ շատ կամ քիչ իրենց օգուտը կ'ազգեն։ որով կուրծքը կը զօրանայ ու երակներուն արիւնը հանգիստ իրեն շրջանը կ'ընէ։ բայց աս տեսակ կը թութիւններուն՝ միշտ որոշեալ ժամանակի մէջ և քիչ ատեն պէտք է ետևէն ըլլալ։ վասն զի ասոնց զեղծմունքէն շատ անգամ կը պատահի փոշտանկութիւն, անընդհատ սիրտխառնուք, և արիւնը գլուխը զարնել, և այլն։ Այս տեսակ կը թութենէն պիտի զգուշանան տկար կուրծքով, փափուկ և հիւանդութենէ նոր ելած մարդիկ։ Իսկ թոթովները՝ շատ անգամ բարձր ձայնով երգելով, պոռալով և կարդարով իրենց թոթովութեանը մերդարման կ'ընեն։

1 Սաւակում։  
2 Ճերեր։

3 Տեղուկում։  
4 Փելուկ։

## ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏ

Ա էրտի որիւն դարձեցնելու պարզ հնաբաններ։

Ա էրդի մը արիւնը դադրեցնելու համար շատ օգտակար և դիւրին կերպեր հնարած են։ օրինակի համար՝ կը ընանք վէրքին վրայ դնել մէկէն սպունգ, սարդիոստայն, ծամած կամ թրջած թուղթ, հին լաթի կտորներ, կտաւ, բուրդ, և թէ որ ուրիշ բան չգտնուի։ կրնանք ինչուան լոռ ալ գործածել։ Բայց ամենէն օգտակարն է աղէկ չորցած սպունգ դնելը, որ կը ծծէ արիւնը ու վէրքին բերանը կ'ամփոփի։ Բայց այս իննամբը ընելէն առաջ հարկաւոր է վէրքին երեսը պատած արիւնը լուալ պաղ ջրով ինչուան որ աղէկ մը երենայ վէրքին բերանը։ Ոյէ որ սաստիկ ըլլայ վէրքին արիւնը ու ձեռքով բռնելով ալ չգաղրի՝ պէտք է նոյն անդամը որուն վրայ վէրքն է՝ վերէն կապել։ զոր օրինակ թէ որ ձեռքին վրայ է վէրքը, թեր աղէկ կապել սխմելով, որ ասով սրտին հետ արեան հաղորդակցութիւնը քիչ մը կը կտրուի ու արիւնը կը դադրի։ նոյնպէս վէրքն ալ կրնանք կապել սխմելով բաւական է սաստիկ ցաւ չիտայ։

Այս ալ գիտնալու բան մըն է որ եթէ մէկը արիւն առնէ ու կապը թոյլ ըլլալով կամ աղէկ կապած ըլլալով վէրքը բացուի ու արիւնը սկսի վազել, պէտք է լուալ վէրքը զգուշութեամբ ու աղէկ մը կապել։ նոյնպէս տղրուկի վէրքերը որ երբեմն բացուելով շատ վնաս կը բերեն։ իսկ թէ որ վերի դրած հնարքներուն օգուտը տեսնես՝ վէրքին վրայ ցանէ ածուխի փոշի կամ պաղեղ ու սպունգի կտոր մը ոգեղէն հեղուկի մը մէջ թաթիւնելով քաշ վրան։ Ա իրաբոյժները երբեմն կը ստիպուին դժոխաքարով, կամ տաքցուցած երկաթով մը այրել վէրքը որ ամփոփուի։

Ա էրք ունեցողը ջերմացուցիչ բաներ

1 Ճերեւակ դաւ։

կամշատ ուտելիսելէն պիտի զգուշանայ . օգտակար են զովացուցիչ ըմպելիները , զոր օրինակ յստակ ջուր քանի մը պրգալ մէջը քացախ դնելով՝ որ շատ կը զովացընէ :

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ . ԽՐԵՇԵՆ ՀՐԲՈՒՅՏ ԴԱՅ :

|| ԵՐՋԱՊԻՍ ԵՐԿՐԱՊԱՄԻՍ անդադար փոփոխմանէն ետև հասաւ երկրիս վրայի հրէշներուն կորստեան օրը . ցամաք երկրիրը մէկ անգամմ' ալ ցածցաւ , ու ստորերկրեայ կրակին հրելովը նորէն կամաց կամաց բարձրացաւ ջրէն վեր կարգ կարգ վրայէ վրայ շարուած հողերով , ու իրեն հետ դուրս բերաւ սատափը , բուստը , և տեսակ տեսակ գյոնզգոյն պողիպողները : || Հագին ձկնամողէզները || վկիանոսին անհուն ալեաց մէջէն քշուելով՝ նոր բացուած աւազաններուն մէջ խրուեցան ու սաստիկ տանջուելով սատկեցան . որոնց մորնչելու ձայները ալեաց ու փոթորկի ահաւոր ձայնին հետ կը խառնուէին . մատնաթենները որ ծառերու վրայ կը բնակէին , ջուրը բարձրանալու ատենը ծառերուն հետ միատեղ կորան : || Ն ատենները նորէն ածխային կազը օդէն բաժնուեցաւ , որով երրորդ անգամմ' ալ օդը մաքրուեցաւ :

Լենդանեաց դարը լըմբնցաւ , և ուրիշ դար մը սկսաւ . ծովէն նոր դուրս ելած ցամաք երկրին վրայ՝ ուր որ առաջ ծովային բոյսերը ծաղկեր էին , նոր նոր բոյսեր առաջ եկան , կաղնին բողբոջ տուաւ , եղեինը կանանչ տերեներով զարդարուեցաւ , ճաներլու բոյսը գեղեցիկ տերևներուն հետ հոտաւէտ ծաղկըներով զարդարուեցաւ . ծիրանի վարդը , շուշանն ու փափուկ մանուշա-

կը իրենց քաղցր հոտը արձակեցին . կաղամախը , հացի ծառը , կիտրոնը , արմաւենին , գորոջ ու սանդալ և ափաժոռ ըսուածները բուսան և աչագին բարձրութեամբ ծառեր եղան . և աս ամէն բոյսերը զարմանալի կերպով մը երկրիս հասարակածէն սկսեալ մինչեւ բակեռները ամէն գօտեաց տակն ալ , որոնք ան ատենը հիմակուան արեադարձներուն գօտեացը պէս բարեխառն էին , հաւասար աստիճանով առաջ կուգային :

Լրկրիս այս խառնափնդորութեամբն և ծովուն այսպիսի այլայլութեամբը քանի որ ջուրերը կը պակսէին , երկրագնտիս ցամաքն ալ երթալով կ'ընդարձակուէր ու կը պնդանար : || Երբին ջերմութիւնը աստիճանաբար պաղելով , ջրերն ալ սկսան կամաց կամաց պաղիլ , և այս պատճառաւաւ ջրին մէջի աղային ու կաւային մասունքները տակը նստան , ուսկից առաջ եկան խաւ 'ի խաւոյ հողերը . աւազի , կապձի , կաւիձի և ածխային կրի վրայէ վրայ շարուած դիրտերը , որ սատկած հրէշներուն ոսկորները ծածկելով ատեն անցնելով քարդարձուցին :

|| Ճերը , դաշտերը ու անստանները բնակչով լեցուեցան : || Ն ատենն էր որ արծիւը իր մեծ թևերը ու զօրաւոր ձիրանները տարածեց օդուն մէջ , ինչպէս ուրիշ թռչուններն ալ սկսան օդուն մէջ թռչըտիլ : || Ն ատենն էր որ մեծամի հարաւային փիղը և ուրիշ մեծ ու պատճառաւոր կաթնտու կենդանիները թաց արօտներու մէջ կը պտըտէին , տեսակ տեսակ ոնդեղիւրներով անտառները լեցուեցան . ելասմոտ ըսուած կենդանին որ ձիու և փղի նմանութիւն ունի՝ կը խայտար ջրարբի մարգերու մէջ , նոյնպէս ձիագետինները ու թափիրները : || Կ ջրաբնակ կենդանիններէն զատ ուրիշ շատ տեսակ կենդանիններ ալ կային , ինչպէս || Եծածիրանը որ միջատներուն հետ սաստիկ կը կուուէր . բարձր ու տափակ ճակատով երկու տեսակ արծեր , գայլեր , մեծ բորենին՝ որուն միան քարացած ոսկորները կը գտնուին ,

1 Աւելէք :

2 Մէրձաւ :

3 Վերիններուն նման ծովային կենդանաբոյներ :